ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԹԵԶԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Հունիսի 25-ին Գևորգյան Հոգևոր Ճեմարանում տեղի ունեցավ վարդապետական թեզերի պաշտպանություն: Վարդապետական աշխատանքներ էին ներկայացրել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբաններ Տ. Արշեն աբեղա Սանոսյանը՝ «V դ. հայ պատմագրության ատրվածաշնչային շերտը», Տ. Թորգոմ աբղ. Տոնիկյանը՝ «Դրվագներ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի քաղաքական ու տնտեսական պատմության (XVI-XVIII դդ.)», և Տ. Մարկոս աբեղա Հովհաննիսյանը՝ «Եկեղեցագիտական և եկեղեցական իրավունքի տարբեր հարցերի արտացոլումը վիմական արձանագրություններում» թեմաներով:

Քննիչ հանձնաժողովը, որի անդամներն էին՝ Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպիսկոպոս Կճոյանը և Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը, գլխավորում էր Շիրակի թեմի առաջնորդ Տ. Միքայել եպիսկոպոս Աջապահյանը: Բոլոր երեք աշխատանքները արժանացան հանձնաժողովի հավանությանը:

Նույն օրն Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում, ձեռամբ Գերաշնորհ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանի, կատարվեց նաև մասնավոր վարդապետական աստիճանների տվչության կարգը: Ընծայացուները ծնրադիր՝ Մեծ Ուսուցչապետի շիրիմի առջև, վերանորոգեցին իրենց սրբազան ուխտը և ստացան վարդապետական գավազաններ՝ որպես խորհրդանիշ քարոզելու և վարդապետական իշխանության:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ